ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«__» մայիսի 2022թ. **N_____-Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 7-Ի N 96-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է՝

1. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մայիսի 7-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու մասին» N 96-Ն որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 7-Ի N 96-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մայիսի 7-ի N 96-Ն որոշմամբ Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին են պատվիրակվել Երևանի քաղաքապետի՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 219.1-րդ հոդվածով սահմանված՝ 43.1 հոդվածի 2-8-րդ և 10-12-րդ մասերով, 113-րդ, 114-րդ հոդվածով, 152.1-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով, 162-րդ, 169.1-րդ, 169.16-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու և վարչական տույժ նշանակելու մասին լիազորությունները:

Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի մարտի 15-ի «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 547-Ա որոշմամբ նախատեսվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչությունում կազմավորել վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժին, որի հիմնական գործառույթն է լինելու վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելն ու վարչական տույժ նշանակելու մասին որոշումներ կայացնելը: Նույն որոշմամբ Երևան քաղաքի վարչական շրջանների աշխատակազմերում լուծարվել են իրավաբանական բաժինները, որոնք զբաղվում էին նաև Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մայիսի 7-ի N 96-Ն որոշմամբ Երևանի քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին պատվիրակված վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի համապատասխան հոդվածներով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությամբ և վարչական տույժ նշանակելու մասին որոշումների կայացմամբ:

Առաջարկվող կարգավորման բնույթ.

Նախագծով առաջարկվում է վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 219.1-րդ հոդվածով սահմանված՝ 43.1 հոդվածի 2-8-րդ և 10-12-րդ մասերով, 113-րդ, 114-րդ հոդվածով, 152.1-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով, 162-րդ, 169.1-րդ, 169.16-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու մասին որոշումներ կայացնելու լիազորությունները այլևս չպատվիրակել Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին:

Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագիծը մշակվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության կողմից:

Ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունումը Երևան համայնքում նախաձեռնված օպտիլացման և կառուցվածքային բարեփոխումների անհրաժեշտ քայլ է՝ գործառույթների կրկնությունը բացառելու ճանապարհին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 7-Ի N 96-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մայիսի 7-ի N96-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 7-Ի N 96-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մայիսի 7-ի N96-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի ծախսերում փոփոխություններ չեն նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**